դէսը՝ 55,486 հանդիսադրօք՝ ոչինչ նուազ քան 52 միլիոն և 500,000 այցելու ունեցաւ։

---

ԾՈՓԱՐ։ *Երգիչ ծառը․ Այս խորհրդական երգիչը ծոփար, ծառ է բնիկ կեդրոնական Ափրիկոյ, մեծ յարգ ունի առ արաբացի վաճառականս իւր առատ խէժին համար․ կարի յոյժ ախորժելի ճճեաց իւր մեծաքանակ և քաղցր հիւթովը։ Անթիւ անհամար ճճիք կը ծակեն ճիւղերը և կը ծծեն անոնց մէջ բովանդակուած քաղցր հիւթը, և ոստերն պարպուելով բոլորովին՝ օդոյ ազդեցութեամբ ալ կարծրանալով՝ բնական երգեհոն գործի մի կը ձևացընեն։ Երբ հովը փչէ, ծոփարը, սրնգի նման կը սկսի ձգել իւր խորհրդական ձայնը այն գերեզմանական միայնութեան մէջ, և սնոտիապաշտ յարգանք կ'ազդէ բնիկ վայրենեաց վրայ։*

---

## ԱՍԿԼԵՊԵԱՅ ՏԱՃԱՐԻՆ ԳԻՒՏԸ

*Փարոս կղզւոյն մէջ հնախօսական նոր գիւտ մը եղաւ՝ որ գիտնոց դասակարգին համար շատ հետաքրքրական բան մ'է։ Ժամանակէ մ'ի վեր, յիշեալ կղզւոյն մէջ՝ Աթէնքի գերմանական հնախօսութեան դպրոցի կողմանէ եղած պեղումներու շնորհիւ՝ ի լոյս ելած է Ասկլեպեայ հռչակաւոր տաճարը, զոր Յունաց վաղեմի հեղինակներէն ոմանք մեզ գրով աւանդած են, որոնցմով գիտենք թէ սոյն այս համբաւեալ տաճարն՝ Փարոս կղզւոյն նշանաւոր ուխտատեղեաց մին էր, ուր հիները շատ կը յաճախէին։ Գրեթէ չէնքը ամբողջովին մնացած է․ 41, 25 մեդր երկայնութիւն և 19, 50 լայնութիւն ունի։*

*Դժբախտաբար՝ հնութեան այս դասական աքանչելի յիշատակարանը՝ որ անգին գանձեր կը պարունակէր, դարերու ընթացից մէջ՝ այնքան կողոպտուած է՝ որ այլ ևս հոն ոչ խորաքանդակ և ոչ ոսկւոյ կամ փղոսկրի հետք մնացած են։*

*Սակայն հնախօսական տեսակէտով այս տաճարին գիւտն շատ մեծ կարևորութիւն ունի, որովհետև գերմանացի հնախօսք հոն մարմարէ բազմաթիւ թիթեղներ և կոթողներ ալ գտած են, որոնց վրայ պատմական շատ կարևոր արձանագրութիւններ կան։*

*Տաճարէն քիչ հեռու՝ աղբիւր մը գտնուած է, որ մեր թուականէն վեց կամ եօթը դար առաջ շինուած է եղեր։ Ճերմակ մարմարեայ, զարմանալի՝ իւր առատահոս, վճիտ և պաղ ջրովն։ Պեղումները կը շարունակուին և կը գտնուին դեռ ամենահին աւերակներ։*

# ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

## ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԹԵՐԹԻՑ

ԱՐԱՐԱՏ (*յունիս*), *Վաղարշապատ։*

*Քաղուածք ի կոնդակաց Վեհ. Հայրապետի։ — Քաղուածք Սինոդի Օրագրութիւններէց։ — Քրիստոսի եկեղեցին։ — Եկեղեցին և աղքատներու խնամատարութեան գործը Եւրոպայում (շար.) — Գ. Վ.։ — Յաճախապատում Իգ—րդ ճառը — Պ. Ս.։ — Օրթոդոքս, Կաթոլիկ և բողոքական եկեղեցիներ։ — Կրօնաւորներ պէ՞տք են։ — Մայր աթոռ։ — Տաճկահայք։ — Ինչ է կրթութիւնը — Ս. Մ.։ — Մատենախօսութիւն — Կ. Մ.։ — Յաւելուած՝ Նոր Շարականներ — Ս. Վ.։ — Յայտարարութիւններ։ — Ստացուած գրքեր։*

ԱՐ. ՄԱՄՈՒԼ (*յուլ. 15, օգոս. 1*), *Զմիւռնիա։*

*Ի՞նչ է անձնական շահ։ — Գաղտնեխոյզ Նորենց (շար.) — ԳՐԻԳՈՐ Գ. ՅԱԿՈԲԵԱՆ։ — Տեղագրական Պաթաւիա — ԼՈՒՍԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ։ — Արճիշեցւոց դիրն — ԾԻԾԵՌՆԻԿ։ — Տնտեսագիտական ուղղութիւն։ — Սգաւոր մայր — Թ. ՈՐԲԵՐԵԱՆ։ — Սաղիմական յիշատակներ — ՀԱՅԿԱԿ։ — Ի՞նչ էր Սպանիա և ի՞նչ պիտի լինի։ — Գրական զրոյցներ — Ա.։ — Առանին գործեր — ՍԻՍԱԿ։ — Ռաճային շափիղայն։ — Տեղեկագրական Պաթաւիա — ԼՈՒՍԻ ԳԱՍՊԱՐԵԱՆ։ — Շէյքսփիր (շար.) — Ա. ՆԱԽԱՐԵԱՆ։ — Տեղագրական պատառիկներ (շար.)։ — Գորաէլիօ և իր ազգ. վարժարանը — Թ. ՈՐԲԵՐԵԱՆ։ — Սահակ — Մեսրոպեան մրցանակ։*

ԼՈՅՍ ՀԱՆԴԷՍ (*յունիս—յուլիս*), *Կ. Պոլիս։*

*Վանքերու շուրջը — ԽՄԲ.։ — Բարոյական և փիլիսոփայութիւն (շար.) — ՓԻԼԻՌ ԹԱՇՕ։ — Դիտողի դատումներ։ — Զլթիկ բժիշկը — Թեթևսօլիկ նշանածը — Մուր քաղները — ՎԱՐԴ ԱՍՏՂՈՒՆՆ։ — Տարրական արձագանգ — ՀԱՌԱՋ։ — Վարդավառի յիշատակներ — ԽՄԲ.։ — Բարոյական և փիլիսոփայութիւն — ՓԻԼԻՌ ԹԱՇՕ։ — Մեր վանքերը ինչո՞ւ ամուլ են — ՊԵՏՐՈՍ Մ. ՍԱՐԱՃԵԱՆ։*

digitised by A.R.A.R.@

ՀԱՆԴԷՍ ԱՄՍ. (օգոստ. սեպտ.), Վիեննա։

Հիստիտներն ու Հայերը ի պրոֆ. պ. Ենսէնէ (շար.)։ — Եղիսաբեթուպոլսոյ Հայոց հեղինակութիւնը Դրանսիլուանիոյ ազգայնոց վրայ (շար. և վերջ) – ՅՈՎՀ. ԱՆԵՑԻ։ — Ձեռագիր հին աւետարան մ'ի Կեսարիա – ԽՄԲ.։ — Նորատունկեան վանք. Գաբրիէլ էֆէնտի – Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ։ — Արդի լեզուագիտութիւնը (շար.) – Հ. Գ. ՄԷՆԷՎԻՇ։ — Եւդոկիոյ Հայոց գաւառաբարբառը (շար.) – ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ։ — Մովսէս Խորենացու Հայոց պատմ. աշխարհ. թարգմանեց և լուսաբանեց Խորէն եպ. Ստեփանէ, Բ. տպ. – Հ. Յ. Տ.։ — Գալուստ Տէր Մկրտչեան (Միաբան) Ագաթանգեղոսի աղբիւրներից։ Յիշատակ դատակնքաց Գորիա և Շմոնի վկայեցին յՈւռհա – Ն. ՄԱՌ.։ — Լէօ, Մէլիքի աղջիկը – Հ. Գ. ՄԷՆ.։ — Հայ արուեստը Վիեննայի ցուցահանդէսին մէջ – ՏԵՂԵԿԱՏՈՒ։ — Ներսէսեան որբանոցն ի Զմիւռնիա – Հ. Ա. Ս.։ — Այլևայլք՝ Նոր հրատարակութիւնք։ — Ազգային թերթերէ Ծաղկեփունջ և Օգտակար գիտելիքներ — Ծաղկաքաղ։ — Քաղաքական տեսութիւն։

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ (յուլիս 18, 25), Կ. Պոլիս։

Ճերմակաբոյծներու օգտակար և շահաւէտ հրահանգ մը (շար.) – ԲՈԼԱՏ։ — Պարտիզպանական կենդանաբանութիւն — Նոյն։ — Ճերմակաբուծութիւն, փասթէօռեան դրութիւնը (շար.) — Խոհանոցի բաժինը – ԱՐԱՔՍ։ — Այգեգործական – Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ։ — Ճերմակաբուծութիւն – մակաբուծային փոխանցիկ հիւանդութիւնք – ԲՈԼԱՏ։ — Դրօշմաթուղթի օրէնքը – Ն. ԹՕԳԱԹԼԵԱՆ։ — Առողջապահական յուշատետր – ստամոքային հիւանդութիւնք – ՄԱՔՍԻՄ։

ՄՈՒՐՃ (յունիս), Տփղիս։

Խօսէք այնպէս, ինչպէս գրում էք (III) – Ա.։ — Արտախանեանց։ — Օգտակար և վնասակար միկրօբներ – Գ. ՍԱՐԳՍԵԱՆՑ։ — Վ. Գ. Բէլինսկի (շար.) – Ն. ԱՂԲԱԼԵԱՆՑ։ — Հանրի Հայնէ (շար.) – ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ։ Սեւ ծովի ափերին (II) – ՅԱԿՈԲ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ։ — Երգ ու վէրք (I) – ՆԻԿ. ԱՂԲԱԼԵԱՆԻ։ — Սերմագործութիւն և ջերմապահութիւն Գողթան գաւառում – ԱՒԵՏԻՍ ԴԱՒԹԵԱՆՑ։ — Ջանազան լուրեր։ — Նոր ստացուած գրքեր։

ԱՐՄԷՆԻԱ (օգոստ. 17), Մարսիլիա։

Յետադարձ ակնարկ – Մ. Կ.։

ԲԻՒԶԱՆԴԻՈՆ (Բ. Տարի, Թ. 538), Կ. Պոլիս։

Գարակէօզեան կտակ։ — (Թիւ 538) Պուլկարահայ քրոնիկ – Ե. ԳԱՂԹԱԿԱՆ։ — (Թիւ 534) Հայք ի Ռումէլի – Գ. Ս.։

ԲԻՒՐԱԿՆ (ԺԶ. Տարի, Թիւ 23), Կ. Պոլիս։

Լեզուաբանական՝ պատարագ – ԲԵՒԵՌԱԳԻՐ։ — Աշամամութ ու Դրճան – ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ – Դ. ԽԱԶԿՈՆՑ։ — (Թիւ 24) Հայերէնէ փոխառեալ բառեր Թրքերէնի մէջ – Յ. ԳԱԶԱՆՃԵԱՆ։ — Շիրակէօլցի հայ աշուղուհի մը – ԿԱՑՄՈՌԻԿ։

L'ARMÉNIE (Ժ. Տարի, Թիւ 118), Փարիզ։

Les Arméniens de la Pologne – AUGUSTE TÉODOROWICZ.

ՄԱՍԻՍ (ԽԵ. Տարի, Թիւ 145), Կ. Պոլիս։

Գարակէօզեան կտակ – Մ. ՆԱՌԼԵԱՆ։ — Ժխտականները – Ս. Յ. ԿՈՒՐՏԻԿԵԱՆ։ Աշխարհաբարի հոլովները (Թիւ 146) – ՅՈՎՀ. ԳԱԶԱՆՃԵԱՆ։ — Լեզուի խնդիրներ (Թիւ 151) – ՀՐԱՆՏ ԱՍԱՏՈՒՐ։

ՄՇԱԿ (ԻԶ. Տարի, Թիւ 121), Տփղիս։

Իզմիրեան մրցանակ – ՈՒՍԱՆՈՂ Լ.։ — Յո՞ երթաս վէպ – Տ. Յ. (Թիւ 90)։

ՆՈՐ ԴԱՐ (ԺԵ. Տարի, Թիւ 121), Տփղիս։

Կրիտիկայի բացակայութիւնը։ — (Թիւ 129) Անառակ երիտասարդութիւնը – ԲԺԻՇԿ ՍԻՄԷՕՆ ՇԱՀՆԱԶԱՐ։

ՆՈՐ ԿԵԱՆՔ (Ա. Տարի, Թիւ 15), Լոնտոն։

Վերընձիւղում – ԱՐՓ. ԱՐՓԻԱՐ։ — Հայաստան – իր պատմ. – դրական դերը արեւելքի մէջ – Ա. ՉՕՊԱՆ։

---

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ
### ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ.

Ըստ կտակի Բարեյիշատակ Յով. Իզմիրեանց՝ Գործադիր Ժողովոյն Յանձնաժողովը պատիւ ունի հրաւիրել այն Հեղինակներն, Բանաստեղծներն, որք Ազգ. Դըպրութեան և Պատմութեան վերաբերեալ մ՛ և է աշխատութեամբ կը փափագին արժանանալ Սահակ-Մեսրոպ. Գրական Մրցանակին, հանդերձ իրենց աշխատութիւններն յուղարկել մինչև յառաջիկայ 1899 տարւոյ Յունուարի վերջը առ Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրն ի Կոստանդնուպոլիս։

Տպագիր երկասիրութիւնք հարկ է որ երեք օրինակ լինին, որք, ինչպէս յայտնի է, ետ չեն դարձուիր։

digitised by A.R.A.R.@